

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԿՈՄՊԵՏԵՆՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻԴԱԿՏԻԿ ՄՈԴԵԼԸ

Միջազգային կապերի շրջանակի ընդլայնումը և ապագա մասնագետի աշխատանքային գործունեության գրավիչ հեռանկարի հնարավորությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում այն շրջանավարտների համար, որոնք տիրապետում են ժամանակակից օտար լեզուների: Այս համատեքստում հոդվածում քննարկվում է բուհում անգլերենի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացումը և ապագա իրավաբանին այդ լեզուն ուսուցանելու համար նոր և գործուն մեթոդական համակարգ մշակելու խնդիրը:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ: իրավագիտական անգլերեն, իրավագիտական անգլերենի դասավանդման մեթոդիկա, դիդակտիկ մոդել

Միջազգային կապերի շրջանակի ընդլայնումը և ապագա մասնագետի աշխատանքային գործունեության գրավիչ հեռանկարի հնարավորությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում այն շրջանավարտների համար, որոնք տիրապետում են ժամանակակից օտար լեզուների: Այս համատեքստում հատկապես կարևորվում է բուհում անգլերենի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացումն ընդհանրապես և ապագա իրավաբանին այդ լեզուն ուսուցանելու համար նոր և գործուն մեթոդական համակարգ մշակելու խնդիրը՝ մասնավորապես իրավաբանի պարագայում անգլերենին գործնականում տիրապետելը ներառում է նաև մասնագիտական ենթալեզվի անթերի իմացությունը, ինչը հնարավորություն է ընձեռում անկաշկանդ

ծավալել գրավոր և բանավոր մասնագիտական գործունեություն՝ ստանալ, մշակել և հաղորդել տեղեկատվություն էլեկտրոնային և ավանդական միջոցներով, իրականացնել մասնագիտական գործառնություններ, զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ, մասնակցել ցանկացած մակարդակի գիտաժողովի և այլն:

Ըստ այդմ, բուհում օտար լեզու ուսուցանող դասախոսի առջև հաճախ են ինչպես ընդհանուր մանկավարժական, այնպես էլ լեզվադիդակտիկական մի շարք հիմնախնդիրներ: Այս հիմնախնդիրները պայմանավորված են բարձրագույն կրթության բարեփոխումներով և Հայաստանի Հանրապետության՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք ընդգրկվելու հետ:

ՀՀ-ի՝ համաշխարհային հանրության ասոցացումը ընթանում է մի շարք ուղղություններով՝ տնտեսական, սոցիալական և մշակութային: Դրան զուգընթաց զգացվում է այնպիսի բարձրակարգ մասնագետների խիստ կարիք, որոնք տիրապետում են օտար լեզուն արդյունավետ մակարդակով, այսինքն կարող են հաղորդակցվել օտար լեզվով, ունեն օտարլեզվյա գրավոր խոսքի հմտություններ և տիրապետում են լեզվական և սոցիոմշակութային գիտելիքների:

Հաղորդակցության, գիտության, տնտեսության, մշակույթի և կրթության ոլորտներում անգլերեն լեզվի հատուկ դերը պայմանավորված է լեզվաբանների, լեզվադիդակտիկայի մասնագետների և մշակութաբանների աճող հետաքրքրությամբ: Մյուս կողմից, տեղեկատվության ծավալի ահագնացող

աճը, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը հանգեցրել է այն փաստի, որ գրավոր և բանավոր հաղորդակցությունը արտասահմանյան կազմակերպությունների և անհատների հետ հիմնականում ընթանում է անգլերեն լեզվով և մասնավորապես էլեկտրոնային կապի միջոցով և անգլերենով հաղորդակցումը դարձել է ցանկացած իրավաբանական ընկերության (կամ մասնավոր փաստաբանի) գործունեության անբաժանելի մաս:

Ասվածի համատեքստում բուհում ապագա իրավաբանին անգլերեն ուսուցանելու նպատակը լեզվական բարձր կոմպետենտությունների տիրապետող մասնագետի պատրաստումն է. մասնագետ, ով ազատ տիրապետում է անգլերենի քերականական և շարահյուսական կառույցներին, անգլերեն լեզվով միտքը շարադրելու տրամաբանությամբ, ինչպես նաև ունի հաղորդակցվելու հոգեբանական ճիշտ հմտություններ:

Այս բոլորը լուրջ խնդիրներ է դնում ոչ լեզվաբանական բուհի իրավաբանական մասնագիտություններում անգերեն դասավանդողների և ընդհանրապես անգլերեն ուսուցման մեթոդիկայի (որպես մանկավարժական գիտության) առջև:

Ոչ լեզվաբանական բուհում օտար լեզվի ուսուցման և ուսանողի օտար լեզվյա կոմպետենտությունների ձևավորման հիմնախնդիրը բազմեզր է և ոչ միանշանակ. դրա հասկացնային (կատեգորիալ) միջոցները գտնվում են մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության, լեզվաբանության, լեզվադիդակտիկայի, մշակութաբանության և լեզվահոգեբանության ոլորտների խաչմերուկում: Սակայն, ի տարբերություն այլ մասնավոր մեթոդիկաների, այն ունի որոշակի առանձնահատկություններ. Լ. Շչերբան ասում է, <Օտար լեզվի դասավանդման մեթոդիկան (կամ նույնն է, ինչ մասնա-

վոր մեթոդիկան՝ օտար լեզուներում կիրառման առումով), ի տարբերություն այլ մեթոդաբանությունների հենվում է ոչ միայն հոգեբանության, այլ նաև ընդհանուր (տեսական) լեզվաբանության վրա>:

Լեզվի մասին գիտության մեջ դիտարկում ենք այն հարցը, թե ինչպես են տեղի ունենում լեզվական երևույթները և ինչպիսին են համապատասխան գործոնները: Հենվելով այդ գիտելիքի վրա՝ մեթոդիկայում դիտարկում ենք այն հարցը, թե ինչ անել անհրաժեշտ լեզվական երևույթները կյանքի կոչելու համար [10, էջ 323–324]:

Ոչ լեզվաբանական բուհում օտար լեզվի դասավանդման գիտական ընդհանուր ուղղվածության մեջ հատկապես առանձնացնում են երկու հիմնախնդիր (ենթաուղղություն).

ընդհանուր լեզվական պատրաստվածության և մասնագիտական լեզվական պատրաստվածության հարաբերակցությունը (ինչպիսին պետք է լինի դրանցից յուրաքանչյուրի հարաբերական կշիռը և ընդհանրապես, արդյոք անհրաժեշտ է տարանջատել տվյալ բաղադրիչները ըստ կշռի),

ինչպիսին պետք է լինի բանավոր խոսքի և գրավոր խոսքի հարաբերակցությունը մասնագիտական լեզվական պատրաստվածության մեջ:

Իրավագիտություն մասնագիտությամբ ուսանողների մասնագիտական ուղղվածության ուսուցման պայմաններն են աութենտիկ տեքստերի ընթերցումը, ընդհանուր և մասնավոր իրավունքների իրավաբանական տերմինահամակարգի հետ ուսանողներին ծանոթացնելու անհրաժեշտությունը, անհատական բառարանի ստեղծման ուղղությամբ ինքնուրույն աշխատելու հմտությունների ձևավորումը և բանավոր մասնագիտական շփման հմտությունների տիրապետումը, որն անցկացվում է առօրյա տարածված հաղորդակցական իրավիճակների տեսքով:

Լեզվական նյութին տիրապետելու առանձնահատկությունը ուսանողների մասնագիտականորեն կողմնորոշված ուսուցման մեթոդիկայում որոշվում է գործածվող բառանյութի մշտական թարմացմամբ: Առաջնահերթություն է համարվում մասնագիտական տեքստերում անծանոթ բառապաշարի հետ ինքնուրույն աշխատելու ձևերի տիրապետումը:

Իրավաբանական մասնագիտության տեքստերի և իրավունքի անգլիական իրավաբանական տերմինահամակարգի նկարագրման համար օգտագործվել են Պ. Մ. Թիերսմայի [1, էջ 139], Պ. Յա. Գայսինայի [2, էջ 161], Ս. Վ. Շաբարդինայի [3, էջ 18] աշխատությունների արդյունքները և իրավաբանական մասնագիտության գործաբանական բնույթի աուբենտիկ տեքստերի սեփական վերլուծությունը:

Բացի վերոնշյալից, իրավաբանական մասնագիտությունների ուսանողների մասնագիտորեն կողմնորոշված ուսուցման բովանդակությունը որոշելու համար վերլուծվել են ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր և գիտակարգեր, որոնք դասավանդում են ուսուցման առաջին փուլում:

Իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար անգլերեն լեզվի դասագրքերի վերլուծությունը ցույց տվեց, որ հրատարակվել են մի շարք դասագրքեր և ձեռնարկներ, որոնք ձգտում են լեզվական պատրաստվածությունը կապել իրավաբանի մասնագիտության հետ: Յու.Լ. Գումանովայի [11], Ն.Ի.Լյապինայի [4], Ա.Ի.Վոդյախայի [5], Ս.Լ.Կոմարովսկայայի [6], և Ա.Ա.Պետոչինի [7] իրավաբանների համար նախատեսված դասագրքերում բոլոր տեքստերը ներկայացնում են քաղաքացիական, քրեական և առևտրային իրավունքներին առնչվող նյութեր, սակայն տվյալ գրքերում բացարձակապես բացակայում է առօրյա հաղորդակցական խոսքը և լսողական հմտություն-

ների ձևավորմանը նպաստող նյութերը, որոնք նպաստում են մասնագիտական պրոբլեմատիկայի և ապագա մասնագետի՝ առօրյա գործնական հաղորդակցման անհրաժեշտ հմտությունների զարգացմանը:

Նշենք, որ տեքստերի բուն պրոբլեմատիկան չունի հստակ հարաբերակցություն հատուկ պատրաստվածության ծրագրերի հետ:

Անգլերեն լեզվի մյուս դասագրքերում (Լ.Մ. Ֆյոդորովայի, Ս.Ն.Նիկիտայի [9, էջ 69] մշակված են հաղորդակցման գործաբանական ապեկտները, առաջարկվում են հեռախոսային բանակցություններ, որոնք առնչվում են իրավաբանի մասնագիտությանը, սակայն ուսումնական տեքստերն ըստ մասնագիտության, որոնք ապահովում են մասնագիտական և լեզվական պատրաստվածության միասնությունը, գրեթե ներկայացված չեն:

Իրավագիտության ֆակուլտետի ուսանողին պրոբլեմատիկան քննարկելու նախապատրաստման նպատակով, որը կազմում է նրա մասնագիտական պատրաստվածության բովանդակությունը, անհրաժեշտ է ընտրել իրավունքի տվյալ ձյուդին վերաբերվող տեքստադարան, որը հնարավորություն կընձեռնի ձևավորել գործաբանական բնույթի կարողություններ և ուսանողին հնարավորություն ընձեռել կողմնորոշվել մասնագիտական գրականության մեջ:

Ուսուցման բովանդակությունը որոշելու և նյութը ընտրելու համար օգտագործվում են հետևյալ սկզբունքները՝

աուբենտիկություն,

գործաբանականություն

մասնագիտական համապատասխանություն (հաշվի առնելով իրավունքի տերմինահամակարգը);

ուսանողների ակնկալիքների հաշվի առնում:

Ուսանողների ուսումնական գործունեության նպատակն է փոխակապակցված ուսումնառությունը և ըմբռնումը,

ինչպես նաև օտար լեզվով հաղորդակցումը մասնագիտական աութենտիկ տեքստերի հիման վրա:

Առաջին սկզբունքը՝ աութենտիկությունը ենթադրում է մտցնել ուսուցման մեջ բնագիր լեզվով տեքստեր՝ ԱՄՆ սահմանադրություն, հատվածներ իրավունքի դասագրքերից, որոնք կիրառվում են ուսումնառության ընթացքում ուսումնասիրվող լեզվի երկրում, ինչպես նաև տեքստեր, որոնք վերցրված են եվրոպական իրավունքի մասին գրականությունից և մասնագիտական հանդեսներից:

Տվյալ համատեքստում մասնավորապես կարևորվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և դատարանի վճիռների կիրառումը՝ որպես աութենտիկ նյութերի պարբերաբար թարմացվող տվյալների շտեմարան անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում [9]:

Երկրորդ սկզբունքը՝ գործաբանությունը ենթադրում է ուսուցման գործընթացում առօրյա-գործնական հաղորդակցական հատվածների պարտադիր ներառում, որոնք արտացոլում են իրավաբանական շփման էնոցիոնալ բնույթը: Այդպիսի հատվածները հնարավորություն կտան ուսանող-իրավաբանին տիրապետել էնոցիոնալ հարաբերությունների, կապ հաստատելու միջոցներին, դատողություն անելու տրամաբանությանը, պատճառահետևանքային հարաբերություններին, հաղորդակցման բացահայտ և թաքնված նպատակների ճանաչման մեթոդներին, խոսակցության կանոններին, որոնք ենթարկվում են համագործակցության սկզբունքներին, արտահայտություններին, ակնարկների, անուղղակի իմաստը կռահելուն, այսինքն տողերի միջակայքում թաքնված իմաստը կարդալու հմտություններին:

Երրորդ սկզբունքը՝ մասնագիտական համապատասխանությունը նշանակում է, որը տեքստադարանը, որը

ընտրվել է ուսանող-իրավաբաններին անգլերեն ուսուցանելու համար, պետք է լինի բավարար՝ ապահովելով ուսանողների հասկացական և կոնցեպտուալ պատրաստվածությունը անմիջական և միջնորդավորված հաղորդակցման ընթացքում՝ հաշվի առնելով իրավունքի տերմինահամակարգը:

Չորրորդը՝ ուսանողների սպասումները հաշվի առնելը հանդիսանում է ուսանողների գործաբանական պահանջարկի չափանիշ, որն ենթադրում է իրավունքի ենթաձյուղերի բարդ համակարգ՝ հասկացողական-տրամաբանական հենքի վրա: Նյութն ընտրելու համար օգտագործվում են իրավաբանական փաստաթղթեր, անգլալեզու երկրների սահմանադրությունները և իրավաբանական հարցեր մեկնաբանող ամսագրեր: Ընտրման գործընթացին ներգրավված էին առաջին կուրսի ուսանողները, որոնք պետք է առանձնացնեին իրենց հետաքրքրող տեքստերը առաջարկվող նյութերից: Այսպիսով հաշվի է առնվել ուսանողների լրացուցիչ գործաբանական պահանջարկը: Արդյունքում ուսուցման բովանդակության մեջ են ներառվել մարդու իրավունքներ, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ֆինանսային և գործարարական իրավունք, պայմանագրային իրավունք, մտավոր սեփականության իրավունք, միջազգային իրավունք և այլն:

Ցանկացած իրավաբանական տեքստը չի կարող իրավագիտական ենթալեզվի դասավանդման նյութ դառնալ համար, այդ իսկ պատճառով լուրջ հետազոտություն է անհրաժեշտ իրավունքի ռեգիստրի յուրաքանչյուր տարատեսակին համապատասխան տեքստերի որոնման և ներկայացման համար:

Իրավաբանական անգլերենի բովանդակության հսկայական բազմազանությունը հանգեցնում է այն փաստին, որ այդ բովանդակության գործնական կիրառումը (ուսուցումը) պահանջում

է համակարգային մոտեցում: Այդ համակարգային մոտեցումը հենվում է ուսուցման կոմպլետնետային մոդելի և դրա շրջանակներում մշակված մանկավարժական տեխնոլոգիաների վրա:

Մոդելի կառուցման առաջին փուլում իրականացվում է սկզբնական ծանոթացում տեքստին և դրա լեզվական առանձնահատկությունների վերլուծություն: Տեքստի վերլուծությունն ուսուցման այնպիսի միջոցների կիրառում է, ինչպիսիք են՝ ցուցադրումը և բացատրությունը, որոնք պետք են ոչ միայն լեզվի նյութի յուրացման համար, այլ նաև խոսքային կարողությունների զարգացման համար:

Երկրորդ փուլի ինտենսիվ պարապմունքներ են՝ ուսումնասիրվող օրինակի լեզվական նյութի յուրացման նպատակով:

Նյութի ակտիվացումը տեքստի առանձին տարրերի տեսքով ապահովում է բուն պարապմունքային վարժությունների կատարումով առանձին նախադասությունների մակարդակով՝ տեղադրում՝ նախադասության կառուցվածքի մեջ տարրերի փոփոխությամբ կամ առանց փոփոխելու, թարգմանություն, նախադասության ինքնուրույն կազմելը ըստ օրինակի և այլն:

Առանձին նախադասության մակարդակով պարապմունքից հետո հնարավոր է անցնել ամբողջ տեքստի վերարտադրելուն: Տեքստի (կամ տեքստի մասի) ամբողջական վերարտադրությունն ունի տեքստին մոտ շարադրողական բնույթ, այսինքն շարադրություն՝ տեղեկության նվազագույն փոփոխմամբ:

Նախկինում ներկայացված օրինակի վրա աշխատանքի երրորդ փուլը դառնում է դրա լեզվական նյութի հետագա ամրապնդումը: Այս փուլում ուսանողներին առաջարկվում է կազմել ավարտված արտահայտություն, որն իր ձայնային ձևավորումով փոքր-ինչ տարբերվում է տրված օրինակից, այ-

սինքն գրել «ազատ» փոխադրություն:

Որևէ տեքստի ազատ շարադրումը շատ մեթոդաբանների կողմից ճանաչվում է ուսանողների՝ մտքերն ինքնուրույն շարադրելու կարողությունների զարգացման և կատարելագործման արդյունավետ ձև:

Չորրորդ փուլում արտաքինապես տրված օրինակի հիմքով արտահայտություն ձևավորելու խնդիրն արդեն փոխարինվում է ամբողջական տեքստի լիովին ինքնուրույն կազմելու խնդրին: Ուսանողների մոտ ինքնուրույն տեքստ կազմելու կարողությունների և հմտությունների զարգացման անհրաժեշտությունը հենց սկզբնական փուլում լիովին համապատասխանում է բարձրագույն կրթության դիդակտիկայի ժամանակակից միտումներին, որոնք առնչվում են են ուսուցման ընթացքում ուսանողների ինքնուրույնության և ստեղծագործ գործունեության աստիճանի բարձրացմանը:

Հաշվի առնելով շարադրության վառ արտահայտված ուսուցողական բնույթը սկզբնական փուլում՝ կարելի է թույլ տալ ուսանողների օգտվել բառարաններից, ինչի շնորհիվ ոչ միայն բարձրանում է աշխատանքի տեմպը, այլ նաև բարելավվում է շարադրության որակը այս կամ այն խնդիրը լուծելու առումով:

Իրավաբանների մասնագիտական կարողությունների պահանջների փոփոխումն անհրաժեշտություն առաջացրեց զինել նրան ժամանակակից տեխնոլոգիաներով և պրոֆեսիոնալ գործիքներով: Օտարալեզու խոսքի հմտությունները և կարողությունները ընտրած դիդակտիկական միջոցների համալիրի օգնությամբ կատարելագործումը պահանջում է վերանայել ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ հասկացությունը՝ նպատակ ունենալով իրականացնել համալիր մոտեցում մասնագիտական կարևոր կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

1. Tiersma P. M. Legal Language. Chicago, 1999.
2. Гайсина Л.Я. Обучение профессиональному общению на основе текста. Дис. канд. пед. наук: – М., 1992, 194 с.
3. Шабардина СВ. Становление терминосистемы права в английском языке. Дис.канд. фил. наук. М., 2002. 237 с.
4. Ляпина Н.П., Карпова Д. П., Глухова Т.А. Английский язык (учебное пособие для студентов юридического факультета). М.: МГУ, 1992. 194 с.
5. Водяха А.Н. Правовая система Великобритании: Учебное пособие. — Харьков: ХГУ, 2003. 237 с.
6. Комаровская С.Д. Justice and the Law in Britain: учебник английского языка для юристов. – 5-е изд. – М.: «Книжный дом «Университет», 2002. 352 с.
7. Песочин А.А. Русско-английский юридический разговорник. Харьков: ХГУ, 2003. 186 с.
8. Федорова Л.М., Никитаев С.Н., Лаврененко М.М. Английский язык. Учебно-методическое пособие. Для студентов юридического факультета. М.: МГОПУ, 2002.
9. <http://www.coe.int/hy/web/yerevan/european-court-of-human-rights>
10. Л.В.Щерба «Языковая система и речевая деятельность». – Ленинград.: Изд-во «Наука», 1974
11. Гуманова Ю.Л. Английский для юристов. Базовый курс. Just English. Издательство: “КноРус”, 2006. 255 с.

ДИДАКТИЧЕСКАЯ МОДЕЛЬ КОМПЕТЕНТНОГО ОБУЧЕНИЯ ЮРИДИЧЕСКОГО АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

ԱՐՍՅԱԿ ԱՐՄԵՆՅԱՆ

*Заведующий отделом по внешним делам международного научно-образовательного центра
НАН РА, преподаватель английского*

Расширение рамок международных отношений и возможности привлекательной перспективы трудовой деятельности создают благоприятные условия для выпускников, владеющих современными иностранными языками. В этом контексте в статье обсуждается повышение эффективности процесса обучения английскому языку в вузах и задача разработки новой и эффективной методической системы обучения этому языку юристов.

DIDACTIC MODEL OF COMPETENCE-BASED TEACHING LEGAL ENGLISH

ARUSYAK HARUTYUNYAN

*Foreign Affairs Department Head of International Scientific-Educational Center,
National Academy of Sciences of the Republic of Armenia, ESP Lecturer*

The expansion of international relations and opportunities of an attractive work prospective for a future specialist create favourable conditions for those graduates who master modern foreign languages. In this context, the article discusses the increase in the efficiency of teaching English in the higher educational institution and development of a new and effective methodological system for teaching English to future lawyers.